

the days of Akbar the Great to the indian mutiny of 1857, by Mesroby I Seth, M. R. A. S., Calcutta, 1930:

ՎԱՍՏԱԿ, պարբերական թերթ անկախական, անասական և և ինքնավարական: Արտոնատեր և պատասխանատու տնօրէն Արտաշէս Գալփաք-ճեան: Թիւ 1—2: Կ. Պոլիս: Boîte postale, No. 393, Yéni Djami, Istambul, Turquie.

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

ՄԵՐ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐՈՒՆ

Ներկայ թիւով կը սկսի ԱՆԱՀԻՏԻ նոր շրջանի երրորդ տարին: Այս թիւը լոյս կը տեսնէ ծանուցուած թուականէն 5—6 շաբաթ ուշ, եւ՝ բաղկացած 192 էջէ՝ կը ներկայացնէ կրկնակ թիւ մը (1—2): Յաջորդ չորս թիւերէն երեքը պիտի բաղկանան ըստ սովորականին 128 էջէ, ճիշդ թիւը դարձեալ պիտի ունենայ 192 էջ:

Այս փոքրիկ «անկանոնութիւնները», զոր անգամ մը եւս թոյլ կուտանք մեզի, արդիւնք են մէկէ աւելի լուրջ պատճառներու զոր հոս պարզել աւելորդ կը նկատենք: Գիտենք որ նորէն ատոր համար գանդատողներ պիտի ըլլան. միանգամ ընդ միշտ ըսենք որ մենք տպագրուած թղթի վաճառական չենք եւ այս հանդէսը լրագրական ամսաթերթի ձեւով չէ որ յղացած ենք, այլ իբր շարք մը գրական հաւաքածուներու որ միայն արժէք ունեցող արտադրութիւններով մեր արդի մատենագրութեան իրական ճիշտացմանը նպաստեն: Ուրախ ենք հաստատել կարենալու որ եթէ մերթ գանդատողներ պատահեցան հրատարակման յապաղումներէն կամ երկու թիւի կցումէն, ատոնք քիչ են թիւով, եւ մեր ընթերցողները, ամենամեծ մասամբ, մեր բուն ծրագիրն ու նըպատակը լիովին ըմբռնած են եւ, այդ նիւթական թերութեանց մասին ներդաժիտ, գնահատական ջերմ արտայայ-

տութիւններով մեզ խրախուսած են:

Ճշգրիտ ըմբռնումի եւ ազնիւ գընահատումի ամենասիրտն այդ արտայայտութիւններէն մին գտանք Սելանիկ հրատարակուող Արեւիկ օրաթերթին, որ իմաստուն ու վառ հայրենասիրութեան համակրելի օրկան մըն է, սա տողերուն մէջ. «Անահիտի ամէն մէկ թիւը անակնկալ մըն է հայ գրական եւ գեղարուեստական աշխարհին համար, որ այժմ այնքան նիհարցած է եւ տեղում: Գրական հանդէս մը չէ Անահիտը, այլ անոր ամէն մէկ հատորը գիրք մըն է հոյակապ, որ անցեալի քաղցր օրերը կը կապէ մեր այսօրուան ազգային կեանքին եւ հայրենի ապրումներուն, եւ որ ցոյց կուտայ նոր ծիրեր ու ծագիլներ որոնք վաղուան մեր գեղեցիկ գարունը կ'աւետեն»:

Այս ձեւով — որ արդար ձեւ մըն է — ըմբռնուած Անահիտէն՝ մեր բոլոր ընթերցողները պէտք է ուրեմն սպասեն, ոչ թէ անոր հրատարակման մեքենական կանոնաւորութիւնը, — որուն նաեւ օր մը նորէն հասնիլ կը փափաքինք անշուշտ եւ կը յուսանք, — այլ իր պարունակութեան յարաճուն բարձրացումը, որ մեր գլխաւոր նպատակակէտն է:

Մեր փոքրիկ անկանոնութիւնները, ամէն պարագայի մէջ հեռու են մեր բաժանորդներու մէկ մասին — մէկ բաւական կարեւոր մասին — վճարման ծայրայեղ անկանոնութեանը հաւատարելէ: Աւելի քան երեք ամիս է որ երկրորդ տարեշրջանը լրացաւ, եւ այդ տարեշրջանի բաժնեգիրներէն ստուար թիւ մը գեռ անվճար կը մնայ ...: Կը յուսանք որ երրորդ տարուան ընթացքին մեր ընթերցողները իրենց բարոյական գնահատման ջերմութեանը պիտի ջանան զուգորդել իրենց բաժնեգիրն արագ վճարման գրական տաքինութիւնը:

Ա. Զ.